ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/42

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2021թ. թիվ 26/26/1549-2021 գրությամբ «Գոլդշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 03.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/458-2021 գրության հիման վրա 05.02.2021թ. թիվ 26/26/1549-2021 գրությամբ նախաձեռնել է «Գոլդշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գոլդշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գոլդշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.02.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի պարոն Գ. Ներսիսյան խնդրում ենք Ձեզ, բացառության կարգով չզրկել մեր ընկերությանը հետագա տենդերների մասնակցելու իրավունքից, քանի-որ մենք ունենք հիմնավոր պատճառներ, որը կախված չէ մեր ընկորության կողմից սխալ գնային առաջարկ տրամադրելու մեջ:

«Գոլդշին» ՍՊԸ մասնակցելով ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման ընթացակարգին, հայտը ուղղարկել ենք 10.12.2020թ-ին, իսկ որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, նամակը ստացել ենք 30.01.2021թ-ին: 10.12.2020թ դրությամբ մենք ունեցել ենք գնային առաջարկ՝ 0.6մմ հաստության, ցինկապատ թիթեղի համար, մեր մատակարար ընկերության կողմից, որը ուղարկում ենք Ձեզ կից ֆայլով (ֆայլի անուն 25.11.20), իսկ 30.01.2021թ-ի դրությամբ, մատակարար ընկերությունը արել է նոր գնային առաջարկ, որը ուղարկում ենք Ձեզ կից ֆայլով (ֆայլի անուն 11.01.21): Այդ երկու գնային առաջարկների մեջ տեսնելով 0,60*1250 թիթեղի գինը թանկացել է մոտ 45%-ով: Այդ պատճառով մեր ընկերությունը հրաժարվել է պայմանագիր ստորագրելուց, քանի որ կկրենք մեծ ֆինասական կորուստներ:

ՀՀ ՊՆ-ին մենք առաջարկել ենք գինը թանկացնել մոտ 20%-ով, որպեսզի ֆինանսական կորստի չափը հնարավորինս փոքրացնենք»:

«Գոլդշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/42 ընթացակարգի շրջանակներում 19.02.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/458-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքում «Գոլդշին» ՍՊԸ-ն՝ հրավերի 9-րդ չափաբաժնի մասով, ճանաչվել է ընտրված մասնակից:

Սահմանված կարգով «Գոլդշին» ՍՊԸ-ին, www.armeps.am համակարգի միջոցով, շնորհվել է պայմանագիրը՝ կից ներկայացնելով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և

պայմանագրի նախագիծը, սակայն «Գոլդշին» ՍՊԸ-ն մերժել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով ընթացակարգի համար ուղարկված պայմանագրի շնորհումը՝ միաժամանակ հրաժարվելով պայմանագիրը կնքելուց:

Կից ներկայացվում են «Գոլդշին» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով պահանջվող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/42 ընթացակարգի շրջանակներում 19.02.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2021/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գոլդշին» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 15.01.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Գոլդշին» ՍՊԸ-ին Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 29.01.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով «Գոլդշին» ՍՊԸ-ին շնորհվել է պայմանագիր կնքելու առաջարկը՝ կից ներկայացնելով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը:
4. «Գոլդշին» ՍՊԸ-ն Համակարգի միջոցով 30.01.2021թ. մերժել է պայմանագրի շնորհումը՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունը.

«Քանի որ մետաղական ցինկապատ թիթեղների գները թանկացել է մոտ 40 (քառասուն) տոկոսի չափով, այդ իսկ պատճառով ընկերությունը չի կարող ստորագրել ՀՀ

ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3 ծածկագրով պայմանագիրը, քանի որ արդյուքնում ընկերությունը կկրի մեծ ֆինանսական վնաս»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2021թ. թիվ 26/26/1549-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/458-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գոլդշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 15.01.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Գոլդշին» ՍՊԸ-ին Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 29.01.2021թ. Համակարգի միջոցով «Գոլդշին» ՍՊԸ-ին շնորհվել է պայմանագիր կնքելու առաջարկը՝ կից ներկայացնելով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը:

«Գոլդշին» ՍՊԸ-ն Համակարգի միջոցով 30.01.2021թ. մերժել է պայմանագրի շնորհումը՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունը.

«Քանի որ մետաղական ցինկապատ թիթեղների գները թանկացել է մոտ 40 (քառասուն) տոկոսի չափով, այդ իսկ պատճառով ընկերությունը չի կարող ստորագրել ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3 ծածկագրով պայմանագիրը, քանի որ արդյուքնում ընկերությունը կկրի մեծ ֆինանսական վնաս»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Գոլդշին» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, ***<u>քանի որ գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Գոլդշին» ՍՊԸ-ն, 15.01.2021թ. նիստի ընթացքում արդեն իսկ ընտրված մասնակից ճանաչվելուց և 29.01.2020թ. պայմանագրի շնորհումից ու պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստանալուց հետո, Համակարգի միջոցով 30.01.2021թ.</u>***

<u>մերժել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված պայմանագրի շնորհումը, այսինքն՝ որպես Ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից՝ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված այն հանգամանքին, որ 0,60*1250 թիթեղի գինը թանկացել է մոտ 45%-ով, ինչն էլ հանգեցրել է Ընկերության կողմից պայմանագիր ստորագրելուց հրաժարվելուն, քանի որ վերջինս կկրեր մեծ ֆինանսական կորուստներ, հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենսդիրը հստակ սահմանել է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմքերը և սույն գործի քննության շրջանակներում ներկայացված հանգամանքը՝ հայտը ներկայացնելուց հետո առաջարկվող ապրանքի գնի աճը, չի կարող դիտարկվել որպես բացառություն «Գոլդշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2021թ. թիվ 26/26/1549-2021 գրությամբ «Գոլդշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գոլդշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**